

Տնօրինական Ս. Տեղեացն: Իսկ վերջինը՝ որ է Խորէն Ծ. Վարդապետ Մխիթարեանց, որ ի ներկայիս Կ. Պօլսոյ Հայոց Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովոյ Ասենապետն է: Եզեսիոյ Վիճակին Առաջնորդ ընտրուած լինելով՝ նոյն թեմին վերայ ըստ նախնաւանդ սովորութեան եւ կանոնաց ուխտուք եպիսկոպոս ձեռնադրեցաւ: Համաձայն Հանրադրութեան եւ խնդրանաց Ժողովրդեանն, որոյ Համար Կ. Պօլսոյ Ս. Պատրիարք Գեորգ. Տ. Ներսէս Արքեպիսկոպոս կաթողիկոս լինելու արժանացաւ: Երբ:

Արդ շնորհաւորելով յիշեալ նորապսակ եպիսկոպոսաց նոր եւ վսեմ պաշտօնը՝ կբարեմաղթեմք՝ զի շնորհիւ եւ ողորմութեամբ Տեառն՝ առաւել զօրանան միշտ յօգուտ եւ ի բարգաւաճանս Ազգիս եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց շահատակելոյ եւ արդիւնաւոր գործերով եկեղեցւոյ Ժիր՝ քաջարթուն՝ բարեվաստակ՝ եւ պարգբեւս պաշտօնեաներ հանգիսանալոյ:

Յիշեալ եպիսկոպոսուէք յԳն ամսոյս աստի ի Ս. Էջմիածնէ մեկնեցան իւրաքանչիւրն իւր պաշտօնաւայրը երթալոյ համար:

ՁԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱԲԵՂԱՅԻՑ:

Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի Միաբաններէն Չոհրապ, Երանոս, Մկրտիչ, Ենովք, Դաւիթ եւ Մեղքիսեղէկ շնորհունակ Սարկաւազունքն ի 21 ն ամ-

սոյս ձեռնադրութեամբ Գեորգ. Պետրոս Արքեպիսկոպոսի Վեհապետեան Կուսակրօն Քահանայութեան աստիճանին արժանացան, եւ նոյն աւուր յերեկոյեան ժամերգութեանն վեղար ընդունելով Աբեղայ օրհնուեցան:

Ըստ վաղեմի սովորութեան՝ յիշեալ նորընծայից ձեռնադրութեան միջոցում անուանքն փոխուելով՝ (Չոհրապն Տէր Սարգսեան) Հմայեակ, (Երանոսն Գէորգեան) Բարդուղիմէոս, (Մկրտիչն Յովակիմեան Նահնազարեանց) Աւետիգ, (Ենովքն Մովսիսեան) Յուսիկ (Դաւիթն Սաթուհեանց) Գարեգին, եւ (Մեղքիսեղէկն Գաղէղեանց) Աստուածատուր անուանուեցան:

Կյուսամբ եւ կբարեմաղթեմք ի Տեառնէ՝ զի վերոյիշեալ նորընծայք՝ Աստուծոյ Տաճարին եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ Ազգի անձնանուէր արժանաւոր պաշտօնեաներ լինին, ճանաչելով իւրեանց արժանացած պաշտաման վսեմութիւնը եւ պարտուց ծանրութիւնը՝ ըստ կարի ջանան յարգիւնս իրագործել ինչ որ առաջի սրբոյ սեղանոյ եւ Աստուծոյ ի ներկայութեան Ժողովրդեան յանձն առին եւ ուխտեցին կատարել սիրով՝ խոնարհութեամբ՝ Տրնազանգութեամբ՝ Ժուժկալութեամբ՝ պատկառ կալով Աստուածային եւ Եկեղեցական օրինաց՝ աւանդութեանց՝ ծիսից՝ արարողութեանց եւ պատուիրանաց անթերի գործադրութեան, եւ այսպէս միշտ պարտավճար լինելով՝ փառաւորուին առաջի Աստուծոյ եւ մարդկան:

Յետագայ նամակը եւ կանոնքը Ա-
խալցխայէն առաքելով առ մեզ՝ թա-
խանձանօք խնդրած էին հրատարակել
ամսագրոյս մէջ:

Որքան փափաքելի էր՝ զի Ախալցխոյ
եկեղեցականք սիրով եւ եռանդեամբ
յարատեւէին իւրեանց ընթերցասիրա-
կան ընկերութեան եւ ջանից մէջ հեռ-
զհեռէ աւելի եւս արգիւնաւորելով,
միանգամայն այլոց քաղաքաց եւ տեղ-
եաց քահանայից եւ համայն եկեղեցա-
կանաց նախանձելի բարի օրինակ դառ-
նային, որով մերազնեայ ամեն կարգի
եւ աստիճանի անձանց եւս մխիթարու-
թիւն եւ խրախոյս կտային:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ
ՅԱԽԱԼՑԻԱՆ.

ԽՏԻՆՈՒՄԻՆԻԱՆ ԱՐԱՐԱՄ ԱՏԱՊԵՐՈՅ.

Վարեորութիւն ունեցաւ մեր նորաբաց Ըն-
թերցարանը խնդրել ի Խմբագրութենէյ Արարատ
Ամսագրոյ տեղի շնորհել իւր թերթերուն մէջ
հրատարակելու ի լուր մերազնեայ ընթերցասիրաց
ի նորոյ հաստատուած եւ Ախճակաւոր Սրբազան
Գեր. Գարրիէլ Արքեպիսկոպոսէն վաւերացած ա-
նոր կանոնները, նմանապէս ընծայուած զբերքը,
թղթերը եւ յամէ ափս զբամական նշանակուած
քահանայից նպաստները ընթերցարանին, եւ ու-
րիշ ազգասէր անձանց միանուագ ընծայքը յա-
կանէ*): Եւ թէ ի՞նչ նպատակաւ մեր միարանու-
թիւնը առիթ ունեցաւ նորա բացմանը յ 30 էն
Մայիսի տարւոյս:

Նկատելով թէ՛ պարագորգութիւնը տաղտկա-
ցուցիչ է մարդոյ եւ վնասառիթ ամեն ժամանակի

(*) Ամսագրոյս թերթից անձկութիւնք չներեցնելու
ներկայ նամակէն եւ կանոններէն զատ՝ նոտեւ ընծայ-
եալ իրեղէնքը եւ ընծայատուաց անուանքը եււն
հրատարակել:

ինչու որ մարդս զորով ընտրութիւն ընկերասէր,
ցանց կկարօտի ընկերական սիրոփանաց թէ խօ-
սակցութեան, թէ խորհրածութեան, եւ թէ
ընթերցանութեան ասեն իրելոհաս գատողու-
թեանց ձեռք կկարկառէ ընտրելին ի գործ դնե-
լու: Աւտի հոգևորական գասուցս Ախալցխոյ
կարի ցանկալի եղաւ ունենալ Ընթերցարան, ուր
պարագ միջոց միախոհ ընկերական սիրով ժո-
ղովիլ եւ պարագիլ յընթերցումն եւ ի խորհր-
դածութիւն առ մեզ վերաբերեալ հոգեշահ եւ
օգտաւէտ ուսումնական գրոց, թղթոց եւ լրա-
գրաց, եւ ի զուր չմտչել ժամանակնիս առաջինը
այս:

Երկրորդ՝ թէպէտ բարեմիտ նպատակ ունեցաւ
Ընթերցարանիս բացումը եւ առ այն որքան մեր
կարիքը կզօրէր՝ պատրաստել մեզանից անոր ըզ-
գալի հարկաւորութեան համար վայելուչ մեծ
գրասեղան ծածկոցաւ, քանի աթոռներ եւ վաթ-
սանիւ չափ զբքեր, որուն մասնակցեցան ոմանք
ընծայատուութեամբ ուղղասիրական հոգով,
որք մի առ մի յակնէ զրուեցան ժողաւինեալ
տունորի մէջ, եւ առ անկորուստ պահպանու-
թիւն՝ յանձնեցաւ մեզանից տարւոր ժամանա-
կաւ նշանակուած ընթերցարանապահին եւ գան-
ձապահին զբամական նպաստները եւ զբքերը պա-
հարանի մջ զեանգած: Այլ տակաւին ընթեր-
ցարանը ունի կարօտութիւն այնպիսեաց, որոյ
մասին կխրախուսէ բարեսիրտ ազգասէր եւ ըն-
թերցասէր համազգայնոց եւ խմբագրաց յոր եւ
իցէ օժանդակութիւն թէ զրոց կողմանէ, եւ թէ
մի մի օրինակ ուղղելու յանուն Ընթերցարանիս
յառաջիկայ նոր տարիէն, ինկելով միանգամայն
նախանձաւոր բարեաց ըստ առաքելոյն՝ որ լաւքն
են:

Լեղիս Ա. քահ. Համբարձումեանց
Մարտիրոս քահ. Մեծատունեանց
Թադէոս քահ. Տէր Վարդանեանց
Կարապետ քահ. Տէր Գրիգորեանց
Համբարձում քահ. Զրպեառեանց.

Համ. 5.
Ի 4 Հ-17-18 1876 - 1/2
ՅՈՒՆԵՍԿԻՆ

Պատճէն հաստատութեան Ընթերցարանին.

«Մտադիր սիրով և մեծաւ հաճութեամբ ըն-
 «կայեալ զգովելի ղիտաւորութեանդ 26րոյ ըզ-
 «յայտարարութիւն որ ի 11 ն Յունիսի տարւոյս
 «ընդ համ. յաղագս ձեանայոյ յԱստուա-
 «ծապահ քաղաքիս ձերում զընթերցարան սահ-
 «մանեալ զխաւորագէտ ի պէտս հոգեորակա-
 «նաց տեղոյս և միանգամայն յակն արկեալ
 «զլանոնադրութիւն առաջարկեալ մեզ ի ձէնջ
 «ի հաստատութիւն շնորհ ունիմք զձերմէ բա-
 «րեւէր և օգտաւէտ մտադրութեանց և ահա
 «մերովս ստորագրութեամբ հաստատեալ զկա-
 «նոնս զայնոսիկ զարձուցանեմք ընդ սմին առ
 «ձեզ ի գործադրութիւն՝ մաղթելով զանպէտ
 «և զանթերի յաջողութիւն զովելի ձեանար-
 «կութեանդ ձերոյ ։»

Զորպիսի հաստատութիւն հանգերձ կանոնիք
 ի ձեռն Հոգեւոր կառավարութեան գրութեամբ
 իւրով ի 23 Յունիսի տարւոյս համ. 268՝ ստա-
 ցաւ միաբանութիւն մեր։

Կ Ա Ն Ո Ն Ք

ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Ա Կ Ա Ն Ա Ս Հ Ա Յ Ո Յ

ԱՆԵԼՑԻՍՈՅ ԲԸՂԱՔԻ.

Ա.

Նպատակ և վաղձան Ընթերցարանին է տալ
 զիրութիւն բոլոր Հայ քահանայից, սարկաւա-
 գաց և դպրաց Ախայցիոյ քաղաքի յազատ ժա-
 մանակս յարտաքոյ քահանայական և եկեղե-
 ցական պաշտամանց իւրեանց ժողովեալ ի նմին
 ընթեռնուլ զայլ և այլ գրեանս, զամաղիրս,
 զլրագիրս և զօրագիրս ցարդ հրատարակեալս և
 հրատարակելիս այսուհետե թէ ի Հայ և թէ ի
 Ռուս լեզուս Այսու ազգաւ և անդամք Ըն-
 թերցարանին համարին վերջիշեալ հոգեւորական
 գասք և քարտուղար Հոգեւոր կառավարութեան.

Բ.

Տէր Առաջնորդական փոխանորդն Ախայցիոյ
 համարի պատուաւոր անդամ և վճարէ յօգուտ

Ընթերցարանին միանուագ ի տարին որքան և
 կամի.

Գ.

Ընթերցարանն զետեղի ի միում ի սենակաց
 եկեղեցական տան գտանեցելոյ ի գաւթի սուրբ
 Փրկիչ եկեղեցւոյն և յատկացելոյ վասն հերթա-
 կալ պատարագիչ քահանայից.

Դ.

Աղբիւրք պահպանութեան Ընթերցարանին են.
 -) այլ և այլ կամաւոր նուէրք և ընծայատու-
 թիւնք յուսումնասէր և ի բարեպաշտ անձանց.
 Բ) Թոշակք ընկալեալք յանգամաց Ընթերցա-
 րանին.

Ե.

Յընթերցարանին զոն չորիքին մատենար ժա-
 պաւինեալք և իսկական ստորագրութեամբ բոլոր
 քահանայից վաւերացուցեալք, յորոյ առաջնումն
 գրին ամենատեսակ նուէրք և ընծայատուութիւնք
 ի զանազան անձանց ստորագրութեամբ նուիրա-
 տուացն և ընծայատուաց. յերկրորդումն թոշակք
 ընկալեալք յանգամաց. յերրորդումն ամենատե-
 սակ կահ - կարասիք ընթերցարանին. իսկ ի չոր-
 րորդումն թիւ և որքանութիւն ամենատեսակ
 գրեանց, ամագրոց, լրագրաց և օրագրոց Ընթեր-
 ցարանին. Յայսոցիկ մատենից առաջին երեքն մը-
 նալոց են առ զանձապահն ընթերցարանին, իսկ
 վերջինն առ Ընթերցարանագետն.

Զ.

Իւրաքանչիւր անդամ ի քահանայից պարտի
 հատուցանել յօդուտ Ընթերցարանին իսկզբան
 իւրաքանչիւր ամսոյ զքսան կոպ. արծաթիս, իսկ
 սարկաւազունք և դովրք զտասն կոպ. արծաթիս,
 զորս ընկալեալ գանձապահին նշանակէ ի պատ-
 շածեալ մատենին տարով վճարողին յիւրմէ կող-
 մանէ զապահովագիր, ուր պարտ է ցուցանել զօր-
 քանութիւն թոշակագրամոյն, զօր ստացման և
 զթուահամար մատենին ուր գրեցաւ ի մուտս.

Է.

Յաւարտ երկց ամսոց գանձապահն պարտ է
 հրաւիրել ի ժողով զբոլոր անդամն ընթերցա-

բանին և մի առ մի ցուցանել զամենատեսակ Նը-
ւէրս և ընծայս թէ զգրամականս և թէ զգրեանս,
յորոց առաջինն յետ կազմելոյ զօրինաւոր ար-
ձանագրութիւն, զրի ի մուտս ի գրամական մա-
տենին ձեռամբ զանձապահին, իսկ երկրորդն ի
մատենին գրենւոյ ընթերցարանին ձեռամբ ըն-
թերցարանապետին, որում և յանձնեալ լինին
այնորիկ:

Ը.

Բոլոր զրամք ընթերցարանին պահին առ
զանձապահն, որ չունի իրաւունս առնել որ և
իցէ ծախս կամ ի ձեռս բերել որ և իցէ գրեանս
ստանց նախընթաց գրաւոր արձանագրութեան
և լուծման յոլոր անդամոց. յաւարտ երից ամ-
սոց մատենաք զանձապահին ստուգեալ լինին
յանդամոց և վաւերացուցանին:

Թ.

Ընթերցարանապետն պարտ է նոյնպէս յա-
ւարտ երից ամսոց առաջի առնել անդամոց ըզ-
մանրամասն ցուցակ այլ և այլ գրենւոյ ընթեր-
ցարանին ի ստուգութիւն և ի վաւերացումն:

Ժ.

Առանց զիտութեան և լուծման ընթերցարա-
նապետին ոչ որ յանդամոց չունի իրաւունս ըն-
կալնուլ յընթերցարանէն զորպիսի և իցէ գրեանս,
կամ զպարբերական հրատարակութիւնս. քան-
զի վասն ամենատեսակ կորստից սեպհականու-
թեան ընթերցարանին պատասխանատու է նոյն
ինքն ընթերցարանապետն:

ԺԱ.

Ամենատեսակ պարբերական հրատարակու-
թիւնք պարտին մնալ եօթնօրեայ ժամանակաւ
յընթերցարանին, իսկ այնուհետև կարեն ան-
գամք ստորագրութեամբ տանիլ ի տունս իւր-
եանց, իսկ մատենաք ստորագրութեամբ տարեալ
լինին ի տունս յամենայն ժամանակի միամսեայ
միջոցաւ և ոչ աւելի վասն իւրաքանչիւր մատենի:

ԺԲ.

Ընթերցարանապետն պարտ է ինքնին ստանալ
ի սուրհանդակատանէ զամսագիրս և զլրագիրս

ընթերցարանին և ապա յետ ընթերցման և հար-
կաւորութեան անդամոց զիտեղել քննութիւն կար-
գաւ ի պահարանի ընթերցարանին:

ԺԳ.

Տուչութիւն մատենից, ամսագրոց և լրագրաց
ստեալ լինի մասնաւոր անձանց յառժամանա-
կեայ գործածութիւն ի տունս նոցա, յայն դէպս
միմիայն, եթէ անձինք այնորիկ վճարեացն յօ-
գուտ Ընթերցարանին վեց ուրլի ի տարին.
մուտ այդպիսեայց յընթերցարանն արգելեալ է:

ԺԴ.

Իւրաքանչիւր որ յանդամոց պարտ է հսկել
յամենայն աւուր յընթերցարանին հերթակա-
լութեամբ. ԅորժամ հերթակալն վասն կարի
գործոց ինչ կամի բացակայիլ, զպահպանութիւն
ընթերցարանին կարէ հերթակալն յանձնել
միում յընկերացն, կամ ի ժամահարաց, բայց
պատասխանատուութիւն վասն պատահեալ կո-
րլատիցն մնայ ի վերայ հերթակալին:

ԺԵ.

Գրունք Ընթերցարանին բացեալ լինին յա-
մնայն աւուրս յ 8րդ ժամէ առաւօտեան ց 12
ժամն, զինի ճաշու. իսկ յ 2րդ ժամէ յետ միջօ-
րէի ց 7րդ ժամն երկրոյն:

ԺԶ.

Յընթերցարանին զոյ ցուցակ հերթակալաց
լստ թուոց աւուրց, նոր հերթակալն պարտ է
ստանալ ի հնոյն զտոձեռն գրեանս զամսագիրս
և լրագիրս և ստորագրել ի մէջ պատշաճեալ
սեղանական մատենին, որ նոյնպէս վաւերացեալ
է ստորագրութեամբ քահանայից:

ԺԷ.

Ընթերցումն յընթերցարանին պարտի լինիլ
պատշաճաւոր լուծեամբ և ուրոյն ուրոյն, բայց
եթէ ներկայ գտեալ ըլլոր անգամք կամիցին, կա-
րէ մի ոմն ի նոցանէ բարձրաձայն ընթեռնուլ,
իսկ այլք ըսել:

ԹԸ.

Մարթէ Ենոյնպէս երբեմն խօսիլ ընթերցարանին զայլ և այլ իրաց վերաբերելոց քահանայական պաշտամանց, եթէ այդու ոչ խանգարեսցին կարգք և կանոնք ընթերցարանին:

ԹԹ.

Թէ և բոլոր անդամք ընթերցարանին օգտին համահաւասար իրաւամբ, բայց որպէս հայր և որդի, քահանայքն պարտին հայրաբար իմն սիրով վարել ընդ սարկաւազաց և դպրաց, և սոքա որդիական հնազանդութեամբ և յարդանօր առ քահանայա և ստոր սքրութիւնք յարձանագրութիւնս ընթերցարանին ի վաւերացուցման մասնեց պարտի լինել ըստ աստիճանի և հասակի:

Ի.

Ընտրութիւն զանձապահին և ընթերցարանապետին ի միջոյ նոյն իսկ անգամոց առնեն բոլոր անդամք ընթերցարանին կազմելով առ այն զարձանագրութիւն յորում ամենեքեան պարտին ստորազրել:

ԻԱ.

Թէ զանձապահն և թէ ընթերցարանապետն ընտրին միամեայ ժամանակաւ:

ԻԲ.

Յաւարտ իւրաքանչիւր ամի լինի ընդհանուր ժողով բոլոր անդամոց, որք յետ քննութեան և ստուգութեան ամենատեսակ գործոց ընթերցարանին՝ տպագրութեամբ յազգային լրագիրս հրատարակեն զսինցանէ իւրու հասարակութեան:

ԻԳ.

Զխիսկանն ի Թեմակ. Հոգևոր Իշխանութեանէ հաստատեալ կանոնացս՝ պարտ է Քաղ առ զանձապահն իսկ պատճէն նորին ստորագրութեամբ զանձապահին և ընթերցարանապետին՝ մնալոց է ի վերայ սեղանոյ ընթերցարանին:

ԻԴ.

Այսքիկ կանոնք կարեն յաւելուլ կամ պակասիլ ըստ հանգամանաց և զիպաց ժամանակին:

Ի ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ.

Տիկնաց Մէլոս Հայաստանի լրագրոյ խմբագրութիւնն՝ եկեղեցական — կրօնական դիտելեաց և կանոնաց մէջ պայաջուցեալ տգիտութեանը աւելի պարզ մի օրինակ ցոյց տուած է 46 րդ թիւոյն մէջ կարգալոյժ՝ միանգամայն եկեղեցոյ հաղորդութիւնէն իրբեւ հոսեալ անդամ արտաքսեալ և բազմաձանօթ մի անձը ի հաղորդութիւն եկեղեցոյ ընդունելով և նմին վարդապետութեան աստիճան ընդունելով որով յիշեալ խմբագրութիւնն մի շարքին հետեւեալով որով և իրաստանութեան ստանձնած ձեւանալոյ կհամարձակի, բայց մեր այսրանը աւելի ի զղուշութիւն Մէլոսի խմբագրութեան ազդելով, կյուսամք՝ զի կճանաչէ զինքն և այսպիսի մեղապարտ և դատապարտելի յանձնապատանութեանց՝ ձեռնբեցութեանց և զիզմանց յաճախելէ կսնտի և խսպառ կհեւանայ իւր թերթը ևս զոչոչ պահելով:

ՍԱՐԳԻՍ ԶԱՆՈՒՄԵԱՆՑԻ ՆՈՒԷՐ.

Ի ԻՔԱՐԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԱՐԱՄ ԱՄՍՈՒՐՈՅ.

Պաշտպան անդամ Հոգևոր Ծխական Հայոց երկոց սեռից Գպրոցաց Ասորխանայ՝ Մոսկովաքնակ Հայազն վաճառական Սարգիս Գալուստեան Պարոն Զանուսեանց՝ շարժեալ յազգասիրական զգացմանց ի 15 ներկոյ ամսոյ Հոկտեմբերի ընդ ձեռն Մեծապատիւ եղբոր իւրոյ Պարոն Ստեփաննոսի Զանուսեանց առաքեաց ի նուէր Գպրոցաց զմի հարիւր իննսուն հաս զասական Հայերէն և Ռուսերէն գրեանս ըստ գնոյ մի հարիւր քսան ըստ իր ինքն Հոգաբարձութիւն Գպրոցաց ընդունելով զայնս մեծաւ յարգանօր յայտնեաց զգրաւոր գոհունակութիւն ի զիմաց իւրոց Պ. Սարգիս Զանուսեանց:

Զայսմանէ ծանուցանելով Խմբագրութեանը՝ խոնարհաբար ինչորէ հրատարակել տպագրութեամբ յէջս Երարատ ամսագրոյ զխախանձկի